

ՏԱՍՏԵԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ

# ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 5 կոպեկով:  
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:  
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի  
Тифлисе. Редакция «Менк»

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերէն):  
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:  
Յայտարարութիւնները համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպեկի:

### ԲՈՎԱՆԿԱՌՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Գանձակից:  
Նամակ Մոսկովայից: Նամակ Արաբաբեկից: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Սերբեր: Թիւրքեր: Անգլիա: Արտաքին լուրեր: ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ: ՀԵՌԱՎԻՆՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ՆԱՄԱԿ ԳԱՆԶԱԿԻՑ

Փետրվարի 11-ին

Քաղաքային բժիշկ Ա. Համարիւրի տան շինութեան համար ժողոված պարագաների հրդեհի վատ տարածութիւնը դեռ մեր հասարակութեան մտքից չը հեռացած, ահա ամսին 6-ին, երեկոյեան ժամը 9-ին կրկին երեսց հրդեհ մեծ փողոցում (բաղաբում): Հրդեհը սկսվել է Ատտարխանի կարգի սկզբի երկրորդ կողակից, այն է՝ Միք. Սարգսիանցի կողակից, անցել է արհեստից Ն. Տէր-Ներսիսեանցի խանութը, այդուհետ կողակց բաժանակ է երկու ձիւղ, մինը դեպի ներքեւ, այն է հիւսիսային կողմը, իսկ միւսը դեպի առաջ, արեւմտեան կողմը, տախտակեայ խանութի միջոցով: Մարդը հանգիստ հողով չէր կարողանում նայել հրդեհին, որը անխնայ լավով էր ուղղում լինելի 10—20 տարակայ միջոցում քրտինքով աշխատած գումարը: Այդուհետ 6 կրպակ, և քանդակ է 6 կրպակ: Վնասը դեռ ևս մանրամասն յայտնի չէ, բայց, ինչպէս ասում են, ասել է բան 100,000 ռուբլի: Ի հարկէ, Գանձակի պէս մի աղքատ քաղաքի համար դա մի անսովորական վնաս է: Վերջին ժամանակներում քաղաքային օրվիցիայի թոյլութեամբ մասնաւոր մարդիկ չինել են կրպակները առջև դատարկ դեմնի վրա բուսական տախտակեայ կրպակներ, ստալով յօդուտ քաղաքի մի որոշեալ գումար: Թէև իր ժամանակին չատերը բացատրելով դա մասնակարութիւնը նախագրողացնում էին և մինչև անգամ գրաւոր խնդրում նահանգապետից, որ կարգադրութիւնը չը կատարվի, բայց իզուր է անցնում, ըստ որում քաղաքին փող է հարկուոր: Գացի այդ ատուարների խանութները առաջը իրար վրա դրված են դատարկ արկղեր (հաշիկներ), թափված է խոտ, իսկ իւրաքանչիւր խանութում վաճառվում են դիւրավառ նիւթեղէններ, այն է՝ նաւթ, լուցիկ (լապիչկա), ձէլք, ծծումբ, և այլն, այնպէս որ խրաքանչիւր օր և բոլոր անշուշտ սպասելի է հրդեհը: Արդեօք քաղաքը հող ունի արած մինչ այժմ այդ պահով չէ կրակից, դեռ մեր քաղաքի հասարակութիւնը հասկացողութիւն չունի ոչ հրաշք մեքենայի, և ոչ նրա վարչութեան մասին: Երբ հրդեհը լավում էր Սարգսիանցի և Տէր-Ներսիսեանցի խանութները, մի խումբ բարեմիտների վեպոներով ջուր էին կրում մօտ 30 սածէն հեռաւորութեամբ մէջիցի առաջնից, իսկ մի խումբ արկղաների խանութի և այլ կրպակներից, օգնութեան պատրաստով, զուրկ էին կրում սպրանքները, որպէս զի ազատեն հրդեհից: Աշխատեցին, ազատեցին, այն, բայց մեծ մասը իրենց աները տարան, չը նայելով որ հրդեհի և մէջոտնում դիզուած սարանքների չորսը գնումներով չըջայտած էր:

Ես կարծում եմ, եթէ հրաշք միեւնոյ և վարչութիւնը ունենա՞ր, այդ վարկի այդքան չէին վնասվի: Այստեղ խոլոյն հարց կը տան ինձ, թէ ինչ ծախսով լինի, քանի որ քաղաքը առանց նորան էլ չէ կարողանում կառավարվել, չը նայելով որ մուտքը և ծախքը համար է, ինչպէս ասում են, մօտ 40,000 ռուբլու: Ես կասեմ որ քաղաքային կառավարչութեան պատճառը քաղաքային վարչութեան չունենալն է: Չը նայելով, որ շատ դժուարեան քաղաքներ արժանացել են ինքնակարգութեան իրաւունքներին, բայց Գանձակը նահանգական քաղաք լինելով, դեռ չունի քաղաքային ինքնակարգութիւն: Այժմ հասարակութիւնը չափազանց անապահով է, կարող է համարում ստանալ իր արաւունքները, դուրս գալով հարաւոր իրաւունքները, որոնք հարաւորները չեն կարողանում պարտաւորել իր մուտքը և ծախքը և եթէ հարկուոր էր, մտից արդիւններ հեշտութեամբ կը դանդաղէր, ի հարկէ, այնպէս ասում են, կը հեռացնէր արհեստիցը, որ ինքն իրան չը վնասի, ինչպէս տախտակեայ բուսական կրպակներն են, կը հեռացնէր փողոցի միջոց ըլլալով դիւրավառ նիւթեղէնները, մտքը կը տար խանութների առաջի խոտերը, կեղտոտութիւնները և կը հեռացնէր դատարկ հրդեհի իր հրաշք մեքենայի կառավարութիւնը, կունենար լուր խմելու ջուր և մաքուր առուակներ, կունենար բարեկարգված քաղաքային երկուտ քաղաքներ, կունենար խճուղիներ և կանանաւոր ջրի բաժանարարութիւն, միով բանը շատ բարութիւններ:

Գանձակ քաղաքի գետի ջրի մի յայտնի մասը դիւրացիք իրաւունք ունենցել տանելու իրանց ձեռնով վարչութիւնը, որոնք անհրաժեշտ համար, իսկ ամառը միշտ մնացել է քաղաքում նոյն իսկ քաղաքի պէտքերի համար: Այժմ, ինչպէս լուր է ներքեւ, դիւրացիք իրենց մասը վաճառելով կրպակուր ընկերութեան վրա, իրաւունք են ստել նրան, որ իրենց մասը տանել, այնպէս որ քաղաքը որ ամառ ժամանակ առանց այն էլ ոչ թէ մեծ նեղութիւն էր կրում ջրի պակասութեամբ, այլ և պատճառով էին բացի անընդհատ կրկնելից և մարդասպանութիւններ, այժմ եթէ այդ ջուրն էլ կորցնելու լինի, անշուշտ պէտք է մեր բոլոր այգիների մի նշանաւոր մասը չորանայ: Չէ որ սա էլ քաղաքային կառավարութիւնը չունենալու հետևանքն է: Մեզանում ամենայն բան ինչ վերաբերում է քաղաքին, լուր է ներքեւ վերջնաւոր յետոյ:

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ  
Փետրվարի 21-ին  
Շուտով վրա կը հասնի ամառը և տեղի կունենայ Թիֆլիսում ուսուցչական ժողովը, ով որ հասարակ և համակարգը ունի դեպի այն մեծ դործը, որը պիտի լինի ժողովի նիստերի ու քննադատութիւնների առարկան, սրբազան պարագ պիտի համարի իրան յայտնել իր հայեացքները և իր ձեռքը, որոնք, եթէ օգուտ չը բերէին ընդհանուր գործին, գեթ միասակարբ են չէին լինի ոչինչով, այդ իսկ զգացմունքից դրված՝ ևս առաջարկում եմ իմ այս յօդուածը բանիմաց հայ հասարակութեանը, զվառարարական ուսուցչական ժողովի գործիչներին: Համարում է արեւօք հայ դպրոցը (ընդհանրապէս) իր նպատակին. կարծում եմ, որ—ոչ Այս մասին բաւական խօսակցութեամբ մինչև այժմ մեր կարգութեան մէջ, և արեւօք, հայ դպրոցը չէ կարողանում պատրաստել կանաքի մէջ մտնելիս կարողանալին շարունակել ըստ կարելոյն իրանց ինքնակարգութեան գործը: Հայ ուսումնարանը արտադրում է իր սանիկները այնպիսի արարածներ, որոնք բոլորովին դուրկ են որոշ գաղափարներից, համարմունքից անգամ, հարցախորհրդներից և հետաքրքրութիւնից, որոնք հանդուած են նրա մէջ բոլորովին անդաւնակի: Պատճառները շատ պարզ են. մինչև այս օրս հայ դպրոցները չը կարողացան բաժանվել զանազան բաժանմունքների (категория) իրանց առանձին, որոշ և հաստատ պրոգրամաներով: Մինչև այսօր հայ հասարակութիւնների համար անկարելի էր և թէ բաժանալ հաստատ հիմունքների վրա կառուցած մի հայ ուսուցչական սեմինարիոն, որ տեղից կարողանալին փոքր ի շատ կրթված ուսուցիչներ գոյու գալ դիւրակն նախակարգարանները—սպգի այդ հիմնաքարերը—սպգա, բիրտ,

կոպիտ տիրացուների ճանկերից ազատելու համար, վերջապէս աւելացնում և այն, որ դեռ այսօր մեր ուսումնարաններում շարունակվում է կոպիտ, վարկերի ձեռք, որը ցածրացնում է մարդու աստուածային պատկերը մինչև անասնութեան, գաղափարական և միւս կողմից մեղմում է աշակերտի մէջ նրա «նա»-ը, նրա անձնասիրութիւնը (самолюбие), այնուհետ հասկանալի է այն դրսուցումը, որ դուրս է բերում դպրոցից թշուառ աշակերտը, նրա դիմում թագաւորում է միայն մի սարսափելի ատելութիւն թէ դեպի ուսուցչը, թէ դեպի դպրոցը և այն ոչ թէ դեպի այն դպրոցը և ուսուցչը, որտեղ կամ որի մօտ նա սովորել է, ոչ նա ատում է ամեն բան, ինչ որ կարող է ուսուցչի կամ դպրոց անունը կրել: Ուսուցչի և դպրոց բառերը նրա համար ընդհանուր նշանակութիւն ունենալ էլ հնչող է երևակայել թէ նա ինչ հակակրթնում այնուհետ պիտի վերաբերվի թէ դեպի ինքնակրթութիւնը և թէ դեպի կրթութիւնը առհասարակ:— այս տխուր իրողութիւնների մէջ ևս բաւական ժամանակ ունենի համար վերջ, երբ հինգ տարի սրանից առաջ մի ձխական դպրոցում ամբողջ երկու տարի ուսուցչի պաշտօն էի վարում և... քաղաքում—ես վերը յիշեցի, որ մեզ հարկաւոր են ուսուցչական սեմինարիոններ, այստեղ գուցէ մասնացող անեն ինչ ներսիսեան դպրոցի և Գեորգեան ձեռնարանի վրա, բայց, իմ կարծիքով, ոչ ներսիսեան դպրոցը և ոչ Էջմիածնի ձեռնարանը չեն կարող այն դերը խաղալ և այն յարգութեամբ դիւրակն ուսուցչի ներ պատրաստել ինչպէս այդ կանէր սեմինարիոնը, անս ինչու. Գեորգեան ձեռնարանի աշակերտը երբէք դիւրաւ ցանկութիւն չի ունենայ և եթէ մի օր և է հրաշքով դիւրաւ կառք յայտնի, կը տեսնէք, որ հարկաւորից է խաքար տալիս, նա երբէք չի համարձայնի դիւրում քահանայ ընտրվել և այնտեղ մի ամբողջ ուսումնարանի և դիւրակն ժողովրդեան բարօրութեան հող տանել. Նա շատ լաւ գիտի, որ ձեռնարանը նրան ոչինչով պարտաւորացրել չէ, որ նա իր կուրքը աւարտելուց յետոյ բոլորովին ազատ է և ահա փայտայում է նա իր մէջ աւելի լաւ ապագայ, նա կամ «յայտնի» քաղաքներում, «յայտնի» դպրոցներում «յայտնի» ուժերով կը ծառայի, կամ կը նախապատրաստվի մի փոքր ժամանակ և կը մտնի համալսարան կամ ուրիշ մի օր և է բարձրագոյն դպրոց, այնուհետև նա դիւրը կը գնայ, բաւ լինի: Այսպէս էին մի անգամ ձեռնարանի բարձր դասարանների մի բանի աշակերտների հետ. յուսով եմ, որ ևս չեմ սխալվում և որ շատերը կարող են վիպել նոյնը, որոնք ծանօթ են Գեորգեան ձեռնարանի ուսումնարանի հետ. այսպէս, ուրեմն, դժուար է ասել որ, Գեորգեան ձեռնարանը համարում է իր նպատակին, եթէ այդ նպատակը չէ արդեն բարձրագոյն դպրոցների համար լսողների պատրաստել, այլ հնուտ ուսուցիչներ ու հողերակները տալ ազգին: Ի դէպ, ասելով չեմ համարում յիշել «Մշակի» մի յայտնի թղթակցին նրա խոստումը—գրել ձեռնարանի վրա, թէ որքան էլ միջակարգ դպրոց է, ոչ թէ ուսուցչական սեմինարիոն. իսկ հիմնելի սեմինարիոնում ուսանելի աւարականի թէ թիւրք և թէ բոլանդակութիւնը քիչ կը լինի և նրա առաջին դասարանում կընդունվին թէ ձեռնարանի ներքեւ, թէ ներքեւ, դպրոցի երրորդ դասարանը համարող, թէ ձխական դպրոցներում աւարտողները, զվառար սկզբունքը այս դործի մէջ պիտի լինի

սովորեցնել քիչ և շատ հիմնաւոր և զվառարարական այն, ինչ որ կարող է պիտանի և յարմարաւոր լինել դիւրակն կեանքին. բայց որովհետեւ այժմ մեզ պակասում են անհրաժեշտ մանկավարժներ, հարկաւոր է արեւօք աւելացնել, որ առաջին հոգը պիտի լինի—մի քանի ուսումնողներ, կամ հինգ նոյն ինքն ներսիսեան սանկից ուղարկել արտասահման, ի հարկէ ոչ այնտեղ, որտեղ մանկավարժները ձեռնել են սովորում. ձեռնելու համար այդքան հեռու գնալ չարժէ, ասելի մտիկ տեղ կայ: Ե... քաղաքի յարց և խոտ ծախելու հրապարակը,—նախապէս, անկասկած, վճարելու հարցը սկզբունքի տեսակետից, Թիֆլիսը, իմ կարծիքով, շատ յարմար կը լինի այդպիսի մի սեմինարիոնի համար: Գանք այժմ մի ուրիշ հարցի, որ նոյնպէս հայ դպրոցի ցատու ահն է կազմում. դա գրադարանի հարցն է: Գրադարանի անհրաժեշտութիւնը դպրոցում անկերև է. գրադարանը զվառար դեր է խաղում այն միջոցների մէջ, որոնք սովորեցնում են մարդուն ուղիղ մտածել, դատել և հասկանալ. գրատունը մեծ դարկ է տալիս և մինչև անգամ կարելի է ասել իր սեմինարիոնով զարթեցնում է մարդու մէջ քննական ընդունակութիւնները, բայնացնում է կրկ տիկա կոչված բանը և այսպիսով տալիս է մարդու ձեռքը մի գործիք, որով նա կարողանում է հասնել իր իսկական կոչմանը—այսինքն դառնում է մարդ հաստատ և որոշ բնաւորութեամբ, իր սեմինարիոնը համարմունքներով, ով կարող է հերքել, որ մարդը առանց կրթութեամբ մարդ չէ, այլ մի կաւից շինած էակ, որին կարող են այս կամ այն ձեռք, այս կամ այն ուղղութիւնը տալ. ի հարկէ իմ խօսքը լէտինդի կրթութեամբ մասին չէ, այլ այն ամենահասարակ, բոլորովին անուղ կրթութեամբ մասին է, որ դրդում է մարդուն «իր դատողութիւնը ունենալ» (свое суждение иметь) կրկնում եմ, կրթութեամբ դուրկ մարդը կաւից շինած էակ է, որ շուտ աղքատութեան տակ է ընկնում. բայց միթէ այդ է բնութեան հարազատ գաւակի, նախախնամութեան գգում ու փայտայած էակի պատկերը, հազար անգամ ոչ, մարդը ստեղծված է ազատ լինելու. նա պիտի իշխէ բնութեան վրա, մի և նոյն ժամանակ ենթարկվելով բնութեան անողորմիկ և ներդառնակ օրհնների—անհրաժեշտութիւնների պարզութեանը. եթէ այս այսպէս է, ուրեմն մարդը պիտի հասկանայ իր արժանիքը և դիւրանում այն ամենը, ինչ որ լինում է իր շուրջը. նորան հարկաւոր է ընդհանրապետութիւնը, կրթութեան, առողջ հայեացքը և դատողութիւնը, որպէս զի նա արժանաւոր կերպիւ, իր կոչման համաձայն կարողանայ կատարել իր կարծ, վտանգալի և իշուտ կեանքի նեղ շրջանը: Իսկ որտեղ է այդ կրթական, բուցե հարցն ընթացողը նա թէ և մեր բնութեան մէջն է և քննում է մեղ հետ, բայց նորան զարթեցնելու և արժանապէս մեղ ծառայեցնելու համար, հարկաւոր է մեղ բացի ուսանելը գրատուններ ունենալ, զբերել կարգաւ, միւս կարգացողների հետ խօսել, վիճել, դատողութիւններ տալ: Հայ դպրոցների բազմաթիւ պակասութիւններից ամենատուրը և ամենաշեղանակարը գրադարան չունենալն է, կամ եղանակի աղքատութիւնն ու սղութիւնն է (թէ ևս ցատկ խոստովանել պարտ ենք, որ գրքեր ևս չունենք). թող հիմնեն հայ դպրոցների վարչութիւնները ըստ կարողութեան գրատուններ և ընթերցարաններ իրանց դպրոցներում. գրատունը գուցէ կարողանար փոքր ինչ գում է թիթեանցնել այն գրականը և ստելութիւնը, որ հայ մանուկը մի օր դուրս պիտի բերէ իր «որջից»—գժուար է երևակայել թէ ինչ հոգեկան քանապարհով նա սպասում է այդ փափաղիկ օրին—ասան և մի հարց, որի եթէ անհրաժեշտութիւնը բաւական հասունացած է, կատարում շատ դիւրին պիտի լինի: Թողնելով գրադարանի մանրամասները քաղաքային և դիւրական հայ ուսուցիչներին, ևս կը ձեռնարկեմ իմ կարծիքս երկու խօսքով. հոգեւոր դպրոցներում կըրամ գրադարանները աշխատել ասելի

հարստացնել և հեշտացնել ան միջոցները, որոնցով աշակերտները կը լինեն անարգել իրանց անկողնու մասին գրադարանի գրքերը, ի հարկէ, որոշ ժամանակամիջոցով քաղաքային ծխական դպրոցները, որոնք նիւթապէս աւելի ապահով դրութեան մէջ են, կարող են ունենալ իրանց սեփական գրադարանները, գիւղական դպրոցները, որոնց թիւը, յուրախութիւն ամեն մի հայի, որից օր աւելանում է, կարող են մի ընդհանուր գրադարան հիմնել մասաւորապէս չորս կամ հինգ գիւղի համար. գրադարանը կը գտնվէր կենտրոնում և կը բաժանէր իր գրքերը իր շուրջը. մանրամասները, կրկնում են, թողում են քաղաքային և գիւղական ուսուցիչներին. այժմ գալիս է մի հարց, որ նորքան նշանաւոր է, որքան նոյն ինքն գրադարանը. դա գրքերի ընտրութիւնն է և նոյա օրոշելը դանաղան հասակի դարգացման աստիճանի համար. այս պայմանից մեծ կարևորութիւն ունի աշակերտի մէջ ընթերցալիցութիւնը դարձնելու հարցը. վասնորոշ, եթէ ձեր սանիկին դուք այնպիսի գրքեր տուիք, որոնք չեն կարող նրա հետաքրքրութիւնը դարձնելու, հետևաբար և ձանձորթ կը պատճառեն նրան, այնուհետև աւելի լաւ է «մնաս բարեաւ դարգալան», աւելի որովհետև նա աւելի միտասկար կը դառնայ այդպիսով: Այստեղ աւելորդ չեմ համարում նկատել, որ թիֆլիսի Գայեանեան դպրոցի վարչութիւնը այս կողմից շատ խելացի է կատարում իր պարտականութիւնը. ես միջոց ունեմ թիֆլիսում ամբողջ երկու տարի հաւաստիանալ այդ բանում, որ մեծ պատիւ է բերում դպրոցի վարչութեանը. ես տեսնում էի, թէ ինչ ոգևորութեամբ իմ իննստաման աշակերտներս, որի հետ կրկնութիւններով էի պարսպում, կարող էր «Պարտիզանները» և լարած ուշադրութեամբ ամբողջ կէս ժամ կարգաւոր յետոյ կարողանում էր իր կարգադասի բովանդակութիւնը պատմել. հիանալի էր տեսնել, թէ ինչպէս այդ փոքրիկ օրերը «Քուշտոր»-ի պատմութիւնը կարգաւոր դրամաբար յետ էր քրչում իրանից որը Տրաքոսի խորթ, չար ու անխել մտքը, որ այնպէս անտանելի կերպիւ տանջում չարչարում էր բարի ու ջանասէր որբիկին. այս, պէտք է իմանալ ու՞մ ձեռքը ինչ դիպք տալ և որտա համար մեծ հմտութիւն է հարկաւոր թող ներքի ինձ դարձնել այս հանգամանքի վրա Գայեանեան դպրոցի վարչութեան բարի ուշադրութիւնը, որը այնքան հըմտութեամբ կարողանում էր յարմարել իր աշակերտներին հասկացողութեամբ և դարգացման աստիճանին և ինքնը խոնարհաբար որպէս զի նա յանձն առնէ կազմել մի աղիւսակ հասակների և նոյն յարմար գրքերի (ի հարկէ, մասաւորապէս ճշտութեամբ որչափ շատ գիտար է, եթէ ոչ անկարելի) և հրատարակել մի օր և է լրացրում. այդ աղիւսակը կարող էր փոքր ի շատ ծառայել իրեն ձեռնարկ մեր ծխական դպրոցների վարչութիւններին. ի նկատի պէտք է աւելնալ, որ աղիւսակը ուսուցչին կը ծառայէր միայն իրեն ձեռնարկ, առանց սահմանափակելու նորա նկատողութիւնները և նրա ինքնուրոյն սկզբնաւորութիւնը:

Ես այնքան երկար խօսեցի գրադարանի վրա միայն այն պատճառով, որ այդ հարցը շատ քրչում մեծ հարց է և հարկաւոր է նորա հետ վարվել մեծ գզողութեամբ. գրադարանի բացումը բարեւար պահանջներն կուսնենայ ոչ միայն աշակերտողներին վրա, այլ և հայ հասարակութիւններին, որոնք մէջ ևս հետզհետէ կը դարգանար ընթերցասիրութիւնը. իսկ սէր դէպի ընթերցանութիւնը հասարակութեան մէջ եթէ բուսական կը դարգանայ, այդ արդէն կարող է հաստատ գրական լինել գրադարանների հաստատութեան և դպրոցների բարոյական և նիւթական բարձրութեան:

Վերջացնում եմ նամակս առաջարկելով հայ հասարակութեանը, գլխաւորապէս արդարայ ուսուցչական ժողովին հետեւել խնդիրները:

ա. Հայկական ուսուցչական սեմինարիոն թիֆլիսում, բ. Քաղաքային և գիւղական գրադարաններ և գ. Բաժանումն հայ դպրոցների յայտնի բաժանմունքներին, իրանց որոշ և հաստատ նախագծերով:

Ա. Կ-եանց

ՆԱՄԱԿ ԱՌԱՂՔԱՎԱՐՅ

Փետրվարի 20-ին

Հայր Ստեփաննոս քահանայ Գեորգիոսեանց ամսին 14-ին եկեղեցում մի քարոզ խօսելով, աւսնց, որ մեր Աւազալքի խեղճերին օգնելու և

խեղճերի որոց դաստիարակելու նպատակով պէտք է հիմնել մի «Բարեգործական ընկերութիւն», որի համար նա արդէն կազմել է մի կանոնադրութիւն և կամենում է առաջարկել ժողովին ընտրութեանը:

Միւս օր նրա մի հրաւիրատուակով հաւաքվեցան հայոց ուսումնարանի զահլիճում քաղաքի առաջնակարգ անձինքները մօտ 30 հոգի ընկելու այդ կանոնադրութիւնը:

Տէր-ճայրը բացատրեց Բարեգործական ընկերութիւնների նպատակը և նրանցից սպասված օգուտները, և հարցրեց, արդեօք պէտք է հիմնել և մի բարեգործական ընկերութիւն Արաքալքում. բոլորը ուրախութեամբ համաձայնեցան, և ինքրեցին կարգաւ կանոնադրութիւնը: Նախ քան կանոնադրութեան կարգաւ, ժողովի ընդհանուր ձայների բազմութեամբ, ժողովը կառավարելու համար ընտրվեցաւ նախագահ ճայր Գեորգիոսեանց և քարտուղար պ. Բ. Պիճիկեանց: Ընտրութիւնից յետոյ հ. Գեորգիոսեանցը կարգաւ իր կազմած կանոնադրութիւնը որը ժողովի կողմից, մի քանի անգամ փոփոխութեամբ, ընդունվեցաւ: Այս ընկերութեան նպատակը:

ա) «Ոչնդիւր ընկերաց տալ ամենախելճ հայ գիւղատաններին, առանց կրօնի խտրութեան, որոնք ընկելում են Արաքալք քաղաքում»:

բ) «Հողալ գրադրութիւն ստիւղներու Արաքալքի ամենաաղքատ հայրի որոց, և տալ նրանց դանաղան ուսումնարաններ, այն է՝ ընդհանուր ուսումնական, աւսարակական և արհեստագործական, իւրաքանչիւր ընդունակութեան և ընկերութեան միջոցների համեմատ»:

Արաքալքում տարեկան հինգ բուր է, իսկ ընկերութեան հիմնական դրամաւորը կազմելու է հինգ հարիւր բուր, որը համարեա այժմ պատրաստ է:

Առաջին յօդուածի մէջ յիշված միայն ախալքալքի հայ ընտանիքներին օգնելու խօսքին հ. նախագահը ասեց. «Հայ ընտանիք աւելով ես համակրում եմ արհեստից հայրերին և դրա համար կանոնադրութեան մէջ յիշել եմ միայն հայ ընտանիք» բառը, որովհետև մենք ամենքս էլ լաւ հասկանում ենք, որ հայ աւելով պէտք է հասկանանք ամենայն հային, առանց կրօնի խտրութեան: Հիմա ժողովը ինչպէս է կամենում, պէտք է արդեօք աւելանել Հայ ընտանիք բառի մօտ և առաջ կը օնի խտրութեան բառը, թէ ոչ: Ժողովը լսելով իր սիրած քահանայի ընդմիջ այդ աղաատման խօսքերը և ինքն լինելով «Մշակի» ուղղութեան հետեւող, պատասխանեց որ անշուշտ հարկաւոր է այդ բառերը աւելացնել որովհետև, ով գիտէ, ժամանակին կարող է ընկերութեան կառավարութիւնը ընկնել այնպիսիների ձեռքին, որոնք հայ ընտանիք կը հասկանան միայն հայ-լուսաւորչականներին, ուրեմն այժմանից ապահովութեան համար պէտք է դնել և այդ բառերը:

Հ. Գեորգիոսեանցը արդէն մօտ երկու տարի է որ աշխատում էր այդ ընկերութեան մասին, քանի որ թիֆլիսի ընկերութեան մասին խօսք էլ չը կար. նա ամենայն տեղիցը բերել էր տալիս այս երկու տարուայ միջոցում կանոնադրութիւններ, որտեղ որ կային բարեգործական ընկերութիւններ և նրանցից օգուտ էր քաղում:

Այս մեր բարեգործական ընկերութիւնը չի վրնտաի թիֆլիսի Հնայր բարեգործական ընկերութեանը՝ որովհետև սա միայն օգնելու է Արաքալքայիններին, իսկ թիֆլիսից չէր կարող նոյն օգուտները տալ մնդ, որովհետև նա օգնելու է ընդհանուր հայութեանը:

Մենք հիմնելով այդ ընկերութիւնը, մեր սեփական գործն ենք թեթեւացնում: Եւ ցանկալի էր, որ ամենայն հայաբնակ քաղաքներում, որտեղ կարելի է, հիմնվէին սրա նման ընկերութիւններ: Դուրսայի գաւառում Հալիւ կը պատահի մի օր, առանց մարդասպանութեան և գողութեան դէպքն իմանալու: Գեո ձմեռ ժամանակ աւազակները միջոց չունեն հեշտութեամբ չըջնել երկրում, բայց գաղանքը նրանք աւելի համարձակ են դառնում»:

Այսօր ներկայացնելու են կանոնադրութիւնը հաստատութեան:

\*\*\*

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի 1-ին թիֆլիսի բոլոր թէ քրիստոնէական եկեղեցիներում և թէ մեր քաղաքի հրեական պնադօգայում ու մանամալաւ մղկիթում հանդիսաւոր կերպով կատարվեցաւ հոգեհանգիստ ի Տէր Հանգուցեալ կայսր Ալեքսանդր II-ի յիշատակին:

Պարսկաստանից մեր ստացած մամուլը նամակներից երևում է որ ոչ մի տարի «Մշակը» այդ աստիճան շատ տարածված չէր Պարսկաստանում, այդքան չէր կարողացել ու այդքան համակրող չունէր, որքան այս տարի:

Կիրակի, 28-ին փետրվարի, թիֆլիսի վանքի մայր-եկեղեցում կատարվեցաւ Քրիստոսի յայտնի հայագեա Էդուարդ Գլուբովի յիշատակին հոգեհանգիստ: Մամբրէ վարդապետը մի կարճ ճառի մէջ աշխատեց ցոյց տալ հանգուցեալի արած ծառայութիւնները հայոց ազգին և գրականութեանը: Հանդիսականները բազմաթիւ էին:

Ստացանք ԿՐԱՍՈՒԲԱՋԱՐ քաղաքից, պ. Բէգլարեանցից 2 բուրջ յօգուտ «Միացեալ» ընկերութեան:

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են: «Արդէն շատերն յայտնի է թէ որ աստիճան թշուառ դրութեան մէջ են գտնվում քաղաքիս հայոց երկսեռ դպրոցները: Մեր քաղաքը շատ ժամանակ է որ դրված էր յաջորդից և առանց յաջորդի երկար ժամանակ մնալով դպրոցների դրութիւնը աւելի էլ վատթարացաւ: Վերջապէս էջմիածինը զգաց յաջորդի կարևորութիւնը Գօրու մէջ, այդ հեռու ընկած վրացական տեղում և ուղարկեց մեզ մի երկուսարդ վարդապետ, Գարեգին Ստեփանեանցին: Մտաք գործելով մեր քաղաքը, 27-ին փետրվարի քաղաքի մայր եկեղեցում քարոզելու ժամանակ, Գարեգին վարդապետը ժողովրդին ողբութիւնը հարցնելուց յետոյ, ասեց թէ ողջ է համարվում այն մարդը, ով արել է մի օր և է բարի գործ իր կեանքում, մի օր և է բանով ծառայել է իր հայրենիքին, ողջ է այն մարդը, ով կարեկցաբար ձեռք է մեկնել օգնելու իր թշուառ եղբորը կամ հարեանին, ողջ է այն մարդը, ով իր զբաղմունքներից առաջինը միշտ համարել է հողալ իր հայրենակիցներին միակ վարկութեան յոյս համարված հիմնարկութեան, դպրոցի վրա: Ենչ է դըպրոցը, հարցրեց վարդապետը. դպրոցը այն վե՛ն և նուրբական հիմնարկութիւնն է, պատասխանեց նա, որ պատրաստում է ազգերի համար, ժամանակի պահանջման համաձայն, արժանաւոր քաղաքայինը, արժանաւոր հայրեր և մայրեր: Մենք պէտք է բարոյապէս դարգանանք, շարունակեց քարոզիչը, մտաւորապէս դիտարկելնք, որպէս զի աշխարհիս կուսնը մեր ամենամեծ թշնամու, խաւարի և ազիտութեան էջմ: Անմիջապէս դիմելով ժողովրդին, քարոզիչն ասեց. «Ձեր մէջ կան մամուլը գործից առաջացած կուսակցութիւններ, որոնք ազգային գործը ձգձգելու պատճառ են լինում. մամուլը գործը կապել ազգային, ընդհանուր հասարակական գործերի հետ, ամօթ է»: Վերջ ի վերջոյ վարդապետը ցաւ յայտնեց որ չէ կարող իր ժողովրդի հետ խօսել մայրենի լեզուով, քանի որ գործիցները իրանց մայրենի լեզուն չը դիտեն և անմիջապէս վարդապետի քարոզի վերջանալուց յետոյ մի վրացախօս երեսասարդ հայ քահանայ ստիպվեցաւ թարգմանել ժողովրդին քարոզի խօսքերը վրացերէն լեզուով»:

Մեզ հաղորդում են ՂՈՒԲԱՅԻՑ հետեւալը: «Ընթերցողին յայտնի է որ անցեալ տարի Գուբայի բանակից փախան 37 մարդ կայանաւորված աւազակներով: Նրանցից չորսը քանի մի օր առաջ բռնկեցան գաւառապետի օգնական պ. Հասան-Բեկովի ետևորի շնորհով: Բայց այժմ լսում ենք թէ դրանից առաջ Միբրի աքտրված աւազակներից մասաւորապէս մի 30 մարդ փախել են Միբրից և կրկին վերադարձել են մեր գաւառը: Կարելի է ասել որ մեր Անդրկովկասի ոչ մի գաւառում այնքան մարդասպանութիւն, չարագործութիւն և գողութիւն չէ լինում, որքան Գուբայի գաւառում: Հալիւ կը պատահի մի օր, առանց մարդասպանութեան և գողութեան դէպքն իմանալու: Գեո ձմեռ ժամանակ աւազակները միջոց չունեն հեշտութեամբ չըջնել երկրում, բայց գաղանքը նրանք աւելի համարձակ են դառնում»:

Գաղախի կողմ գիւղից մեզ գրում են թէ այն օրից երբ Գաղախի նոր պրիստավ նշանակվեց Ալարկար բէր Բաֆրեզով, գաւառում սկսեց տիրել հանգստութիւն: Այլ ևս աւազակութիւնների մասին ոչ որ չէ լսում, ինչպէս մի քանի ամիս սրանից առաջ էր: Թէ հայ և թէ թուրք ազգաբնակիցները շատ զո՛ւ է նոր պրիստավի ետևորը, և խելացի գործունէութեանը:

Դիլիջանի հասարակութիւնը, ինչպէս մեզ գրում է մեր թղթակիցը, իր ծխական ուսումնարանի հաշտանների ընտրեց պ. պ. Գրիգորեանցին և Շահապարեանցին: Այդ պարունները իրանց պարտականութիւնը համարեցին ներկայ թիֆ հաշիւը պահանջել նախկին հողաբարձուներից և ուսուցչից: Թղթակիցը ասելով հին հողաբարձուները ցոյց են տուել իրանց հաշի մէջ մի գումար, որ հասարակութեան կարծիքով իր սպասածից պակաս է: Երբ հողաբարձուներին այդ հարցով են դիմում հաշտանները, հողաբարձուները պատասխանատուութիւնը դնում են վարժապետի վրա, իսկ վարժապետը իր կողմից հողաբարձուներին է մեղադրում և մեծ պահանջութիւններ է անում հասարակութիւնից:

Շատերից լսել ենք որ թիֆլիսի երկրորդ կլասիկական դիմաւորայում հայոց կրօնի և լեզուի ուսուցիչը շատ թույլ կերպով է անցնում իր աւարկան աշակերտների հետ, այնպէս որ այդ արարկանների մէջ աշակերտները ոչինչ առաջադիմութիւն չեն անում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱ

„Polit. Corresp.“ լրագիրը հաղորդում է փետրվարի 25-ից հետեւալը: Բուդապէսի մէջ հրատարակվող լրագիրներից մեկի մէջ Սօֆիայից հաղորդված մի լուր էր սուպած, իբր թէ Սերբիայի մէջ հրապարակապէս դրամական նուիրատուութիւններ են հաւաքվում յօգուտ ապստամբ հերցեգովինցիներին: Բացի այդ երկրի զանազան մասերից կամաւորներ են հաւաքվում և որ արդէն 200 սերբ կամաւորներ ուղևորվել են Հերցեգովինա: Բէլգրադից վերջինչալ լրագիրն հաղորդում են, որ այդ լուրը կատարելապէս անհիմն է: Բացի այդ պէտք է զգուշութեամբ վերաբերվել այն բոլոր լուրերին, որոնք ստացվում են Բոզարայի մայրաքաղաքից Սերբիայի գործերի մասին: Այդ լուրերը հնարվում են սլավոնամոլներից հասարակական կարծիքը մարտնչեցնել համար Սերբիայի գործերի դրութեան և սերբական կառավարութեան դիտաւորութիւնների մասին:

Վիենայից փետրվարի 22-ից հեռագրում են, որ Զագրեբից ուղևորվել է Վիեննա աւստրօ-ուկրաինական կայսրին ներկայանալու մի պատգամաւորութիւն սերբիա-հայասակ բօսնիացիներից, ինչպէս կայսրից մտցնել Բօսնիայի վարչութեան մէջ սեղանական լեզու, կանօնաւորել հարկերը և ուղղափառ եկեղեցուն կատարել ազատութիւն տալ: Եթէ կանխել այդ զիջումները, բօսնիացիք անպայման հնազանդութիւն կը յայտնեն: Հիւսիսային Բօսնիայի մէջ ապստամբութիւն է ծագել: Ապստամբները ուղևորվում են դէպի Սերբիայի սահմանները:

ԹԻՒՐԿԻԱ

Գերմանական պաշտօնական լրագիրներից մէկի մէջ տպված է մի թղթակցութիւն Կ. Պօլսից, որ նկարագրում է գերմանական արտաքոյ կարգի դեպատմութեան տեսակցութիւնը սուլթանի հետ և Սե Արժէի շքանշանի յանձնար Արգուլ-Համիդին: Բացի այդ նոյն լրագրի մէջ տպված է գեոպատմութեան առաջնորդ իշխան Բազդրիլի ձառը և սուլթանի պատասխանը այդ ձառին: Խշտան Բազդրիլի դիմեց սուլթանին հետեւալ ձառով, որ արտասանվեցաւ Ֆրանսերէն. «Ձեր մեծութիւն, իմ օգոստափառ թագաւոր կայսրը բարեհաճեց հրամայել ինձ, որ ես յանձնեմ ձեր կայսերական մեծութեանը Սե Արժէի շքանշանը և ես ինձ համար բազդաւորութիւն եմ համարում կատարել

այդ բարձր յանձնարարութիւնը: Մի և նոյն ժամանակ պատիւ ունեւմ յանձնել ձեր մեծութեանը երկու նամակներ, որ իմ օգոստոսափառ կայսրը հրամայեց ինձ յանձնել ձեզ և արտայայտել այն բարեկամական զգացմունքները, որ կայսրը ունի զձեզ ձեր մեծութիւնը: Ձեր մեծութիւն, ուրախ լինելով այն մեծ պատիւի առիթով, որ ցոյց տուեց ինձ իմ թագաւորի ողորմութիւնը, ես մատուցանում եմ իմ բարի ցանկութիւնները ձեր օգոստոսափառ անձնաւորութեանը և ձեր թագաւորութեան բարօրութեանը: Սուլթանը վերջրեց զեւսպանի ձեռքից շքանշանը և պատասխանեց: «Ուրախութեամբ ընդունում եմ այն բարձր և անկեղծ բարեկամութեան այս նշանները, որ նորին մեծութիւն կայսրը բարեհաճեց ինձ ցոյց տալ: Նորին մեծութիւն գերմանական կայսրը առաջին թագաւորն է, որին մենք առաջարկեցինք մեր կայսրութեան ամենաբարձր իմաստաւոր շքանշանը: Կրանով մենք կամենում էինք ցոյց տալ այն անկեղծ յարգանքը, որով մենք վերաբերվում ենք մեր օգոստոսափառ բարեկամ գերմանական կայսրին: Կայսրի երկու նամակների ստանալը, որոնցից մէկը ուրախութիւն է յայտնում իմաստաւոր շքանշանի ստանալու պատճառով, իսկ միւսը վերաբերում է ձեր գեապանութեանը տուած արտաքոյ կարգի յանձնարարութեանը, մեզ մեծ ուրախութիւն պատճառեց: Արդ՛հետեւ մենք անկեղծ կերպով ցանկանում ենք պահպանել և ամրացնել մեր երկիրների մէջ եղած բարեկամական յարաբերութիւնները, ուստի մենք կաշխատենք զործարկել զուր միջոցները այդ նպատակին հասնելու համար: Ես բազմաւոր եմ նոյնպէս և ներանով, որ առիթ ունեցայ ծանօթանալ ձեր ազնիւ և կայսրին բարեկամ անձնաւորութեան հետ: Այդ ծանօթ յետոյ սուլթանին ներկայացան գերմանական գեապանութեան միւս անդամները, որոնց հետ սուլթանը բաւական շատ խօսեց:

Կ. Պոլսից «Վօլթի» ընկերութեանը հեռագրում են փետրվարի 28-ից: Նրէկ գերմանական գեապանատանը մի ձաշ արվեցաւ, որին ներկայ էին թիւրք աստիճանաւորներ, զիւլումաններ և գերմանական արտաքոյ կարգի գեապանութեան անդամները: Գերմանական հաւատարմատար և գեապանատան քարտուղար պ. Հերշֆելդ սուլթանի կենացը առաջարկեց, իսկ Սայիդ-փաշա գերմանական կայսրի կենացը: Այս գերմանական գեապանութիւնը կողմնորոշի Վիւտարի:

«Times» լրագրի թղթակիցը հեռագրում է Կ. Պոլսից փետրվարի 24-ից: Արդ՛հետեւ փետրվարի օրերում բարեկամական բանակցութիւններ եղան թիւրքաց և աւստրո-ունգարական կառավարութիւնների մէջ, թիւրքաց վարչութիւնը հրաւիրեց Կ. Պոլսի մէջ ապրող մի քանի անուանի մահմեդական բօսնիացիներին և առաջարկեց նրանց ներգործել իրանց հայրենակիցների վրա, որ նրանք չը գողթեն Բօսնիայից և չը մանակցեն սլավոնների ապստամբութեանը: Բօսնիացիները պատասխանեցին, որ Բօսնիայի մահմեդական ազգաբնակիչները չափազանց դժգոհ է աւստրո-ունգարական կառավարութիւնից և հետեւապէս իրանց աշխատանքները կառավարութեան ցանկութիւնը կատարելու համար ի զուր կանցնեն: Ընդհակառակը հաստատ կարելի է ասել, որ մահմեդականներից շատերը կը մանակցեն քրիստոնեաների ապստամբութեանը աւստրո-ունգարական անտանելի լծից ազատվելու համար: Գտնեց այդ յայտնութիւնները անկեղծ են, բայց պէտք է ի նկատի առնել,

որ այդ կարծիքներ յայտնողները այն մարդիկն են, որոնք ընդդիմադրում են աւստրիական զօրքերին, — երբ նրանք առաջին անգամ դրաւում են Բօսնիա և Հերցեգովինա, հետեւապէս որոնք թշնամութեամբ են վերաբերվում աւստրիական տիրապետութեանը: Նրանք այնքան ջերմ ցանկաւորում են իրանց հայրենիքի մէջ առաջվայ կարգերի մտնելը, որ հաւատում են ապստամբութեան աջողութեանը և չեն կամենում գործ դնել իրանց ազդեցութիւնը յօգուտ Աւստրո-Ունգարիայի:

ԱՆՊԻՍ

Կարձեալ մի փորձ արվեցաւ թագաւորապանութիւն գործելու համար, նկատում է «Голосъ» լրագրը: Վիկտորիա թագուհու վրա ատրճանակ արձակեց Բօլթրիկ Մակ-Ղին անունով առանց պաշտօնի մի գործակատար: Մակ-Ղին իր յանցանքը այն ժամանակ կատարեց, երբ թագուհին կառք էր նստում և պատրաստվում էր երկաթուղու կայարանից Ուշիգորի պալատը ուղևորվել: Յանցարի գնդակը ոչ ոքի վնաս չը պատճառեց: Յանցարը փորձեց երկրորդ անգամ ատրճանակ արձակել, բայց նրան շքապատող ամբողջ բռնեց նրան:

Կասկածում են, որ Մակ-Ղին խելագար է և այդ կասկածը շատ իրաւացի է: Անգլիայի մէջ բոլորովին անհասկանալի է թագաւորապանութիւնը քաղաքական նպատակներով, որովհետեւ բրիտանական թագաւորները, խստութեամբ պահպանելով բրիտանական պետական կազմակերպութեան դարձող աւանդութիւնները, շատ քիչ են ազդում քաղաքական գործերի ընթացքի վրա, որ կատարելապէս կախված է կառավարչական ղեկը իր ձեռքին ունեցող մինիստրութեան կարծիքներից և համոզմունքներից, իսկ մինիստրութիւնը կախում է ունենում պարլամենտական մեծամասնութիւնից, որ արտայայտում է ազգաբնակչութեան մեծամասնութեան կամքը: Քանի որ պայմանները այսպէս են, աւելի հասկանալի կը լինէին անգլիական յեղափոխականների և դաւադիրների յանցարք փորձերը մինիստրների կամ մինիստրութեան առաջնորդի կեանքի դէմ: Խաբարանչիւր անգլիացի, իմանալով թէ Մակ-Ղին յանցարք փորձը ուղղված էր թագուհու կեանքի դէմ, բնականաբար ինքն իրան կը հարցնէ, արդեօք խելագար չէ այդ խելք՝ գործակատարը, որ ատրճանակ է արձակում մի թագուհու վրա, որ անձնական թշնամիներ չունի քաղաքական ոչ մի կուսակցութեան մէջ:

Պէտք է յիշել նոյնպէս և այն հանգամանքը, որ Եւրոպայի մէջ բացի Վիկտորիա թագուհուց կան սահմանադրական մի քանի թագաւորներ, որոնց կեանքի դէմ յանցարք փորձեր կատարվեցան: Պասանանտէ, Մունկասի և Օտերո նոյնպէս մի ժամանակ խելագարներ էին համարվում, բայց վերջը քաղաքական նշանաւոր յանցարքներ յայտնվեցան: Չարմանալի չի լինի, եթէ Մակ-Ղին էլ զբանցից լինի: Արդ՛հետեւ յանցարքը կարանաւորված է, նրա չարագործութեան խելական շարժառիթները շուտով կը յայտնվեն, բայց անգլիական ժողովուրդը անյապաղ կը յայտնի իր զգացմունքները ամենարօշ ձեով: Ամբողջ Անգլիան կը վրդովի, իմանալով այն փոստի լուրը, որին ենթարկվեցաւ նրա թագուհին: Խաբարանչիւր անգլիացի այնքան համբուշտ է իր թագաւորի հետ, անգլիական ժողովուրդը այնպիսի մեծ նշանակութիւն է տալիս բրիտանական գահին հանգստու-

թեանը, որ նա կը զայրանայ ոչ թէ միայն Մակ-Ղինի, այլ բոլոր թագաւորապանների դէմ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Լրագիրները հարգում են, որ խողովածառ Բէրնարդ Բէլլի, որը ցոյց տուեց անգլիական կառավարութեանը զինամիտի և զէնքերի պահեստ, սպանվեցաւ Գուրլինի փողոցների վրա, փետրվարի 26-ին, երեկոյեան տասը ժամին: Յանցարքները փակնաւ:

— Վիեննայի «Presse» լրագրին Սալոնիկից հարգում են, որ Մակեդոնիայում այս օրերս կառավարութեան մի քանի բողոքագրիներ, որոնք մեղադրում են պետական յանցանքի մէջ, նրանք բոլորն էլ շղթայակալ Պրիշտին ուղարկվեցան: Նրանց կառավարները անյապաղ յարգում են:

— «Daily News» լրագրի վիեննայի թղթակիցը, փետրվարի 28-ից, հարգում է, որ անցեալ շաբաթ Զէտինեում խորհուրդ կայացաւ, որ շնորհիւ էր Չէրնոօրիա փակած ապստամբների ընտանիքները խնամելու խնդրել: Սլավոնական մասնաժողովը այդ նպատակով նշանաւոր դուժարներ ուղարկեց չէրնոօրիական կառավարութեանը: Բազմաթիւ դիւրի բնակիչներ Բօսնիայում և Հերցեգովինայում թողեցին իրանց տները և միացան ապստամբների հետ, իսկ այն ընտանիքները, որոնք հաւատարիմ են մնում Աւստրիային, վերջին աստիճան ջքաւորութեան մէջ են դանդում: Չինուրական վարչութիւնները հարկաւոր բնակիչներին հայ են բաժանում: Ամբողջ Չագորիի զրկվեցաւ համարեա իր բոլոր բնակիչներից:

— «Paris-Journal» լրագիրը հարգում է, որ Փարիզի ուսումնարանական շրջանում, որի մէջ ինն դեպարտամենտներ են մտնում, միայն ութը ընտանիքների հարցը յայտնեցին իրանց ցանկութիւնը, որ իրանց դաւանները կրօն չը ստորնին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիական թագուհու կեանքի դէմ արած փորձի մասին «Վէօնի» լրագրին» Լօնդօնից, մարտի 3-ից հարգում են հետեւեալը: «Նրա թագուհին, երէկ, մարտի 2-ին, Յինգ և կէս ժամին, Բէտտրիսէ իշխանուհու և պալատական մէկ տիկնոջ հետ միասին կառքով դուրս եկաւ Ուինձօրեան երկաթուղու կայարանից պարտոք դնալու համար, մի անձնաօթ մարդ ատրճանակ արձակեց նրա վրա: Իշխանուհի Բէտտրիսէ նկատեց, թէ ինչպէս նա պատրաստվում էր արձակել, և շատ վախեցաւ, այն ինչ թագուհին, որ ուրիշ կողմն էր նայում, չը տեսնէր ինչպէս ինքն ինքն իրազմեցաւ ամբողջ բազմակնցութիւններով, որ ուղևորում էր թագուհուն «կեցցէ» աղաղակներով: Գնտաղը, ինչպէս երևում է, անցաւ արագ դնալով կառքի կողքը: մինչև այժմ նրա հետքը չէ գտնված: Գէլ անունով պոլիցիականը բռնեց յանցարքին, և նրա հետ միասին յարձակվեցաւ ամբողջ և կամենում էր սպանել չարագործին: Բայց պոլիցիան ցրվեց յարձակվողներին և յանցարքին ստարա բանալը: Այնտեղ զննեց նրան բժիշկը, և գտաւ որ նա խելագար չէ: Թագուհին ուղղակի պալատը դնաց և հրամայեց առաջին մինիստրին և Ուէլլի իշխանի անունով հեռագիրներ ուղարկել, որոնց մէջ միասնացնում էր նրանց, թէ ինքն բոլորովին առողջ է: Իշխանը, հասարակութեանը հանգստացնելու համար թատրօն դնաց և երբ հասարակութիւնը, իմանալով այդ անցքի մասին, անհանգստութիւն ցոյց տուեց, նա հրամայեց բէթօրի բերանով յայտնել, թէ թագուհին բոլորովին առողջ է, որից յետոյ թատրօնում գտնված բոլոր մարդիկը վեր կացան իրանց տեղերից և սկսեցին երկել ազգային կրքը: Թագուհու հեռագիրը հարգովեցաւ օտար գեապաններին, որոնք բոլորը հաւաքվեցան Ուոլինգթօնի պալատը իրանց շնորհաւորութիւնները մատուցանելու թագուհուն նրա ազատութեան պատճառով: Նրա այդ անցքի մասին իմացան դաւաններում, ամեն տեղ ժողովներ կայացան և շնորհաւորական նամակներ ուղարկեցին թագուհուն: Այդ արդէն վեցերորդ փորձն է Վիկտորիա թագուհու կեանքի դէմ, առաջին փորձն եղաւ 1840 թ-ին: Յանցարքի մասին, որի անունը Բօրկրա Մակ-Ղին է, հետեւալ մանրամասնութիւններ յայտնվեցան: Նրա պոլիցիական պաշտօնեան բռնեց նրան, այն

ժամանակ նա բացականչեց. «Չեղք մի տար ինձ, ես այդ արեցի սովի ազդեցութեան տակ»: Այդ խօսքերը հաստատեց նրա ցաւալի կերպարանը: նա միջանապակ մարդ է, նիւար և շատ աղքատ հարկած: Նրա գրպանում գտան երեք կէսպէսնոց, թաշկինակ, նամակ հասցեով և մէկ փաթեթ տան և չորս պատրօններով: Բէթօրէլը վեց փողանի է և տասը շիլլինգից աւելի չարժէ: Յանցարքը ծագումով Դօտլանդիայից կամ հիւսիսային Իրլանդիայից է, ինչպէս ցոյց է տալի հենց նրա անունը, բայց ծնվել է Լօնդօնում: Մէկ շաբաթ առաջ նա ոտով եկաւ Պորտսմութից և Ուինձօրում մնաց, երկի, թագուհու վերաբարձին սպանելու համար: Մակ-Ղին գործակատար էր մէկ խանութում: \*

Փարիզում, մարտի 2-ին, վախճանվեցաւ յայտնի գրող և ունգարական քաղաքական գործող Ֆրիդրիխ Սարվա դէ: Նա ծնվեցաւ Ունգարիայում, Ունգարիայում, 1822 թ-ին, ուսումնասիրեց իրաւաբանութիւնը Վիեննայում և Պրագայում և 1847 թ-ին իրաւաբան դարձաւ Պրեքտորատ: Կօչուտի ժամանակ Տէլէկիին Փարիզում դեպքան նշանակելուց յետոյ, նրան այնտեղ ունգարական գեապանութեան առաջին քարտուղար նշանակեցին: Կօչուտի ընկնելուց յետոյ նա մի քանի տարի «Վէօնի» լրագրի» Փարիզի թղթակից էր: Սարվադի պատկիւմ էր յայտնի պիանիստ կնոջ Վիլհելմինա կլաուսի հետ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մարտի: Աւստրիան դարձեալ դուժարում է պատգամաւորների ժողովը, որից նոր կրեդիտ կը խնդրէ Հերցեգովինայի մէջ պատերազմը շարունակելու համար: Չինուրական շրջանների մէջ խօսում են զօրքերի մէջ պողպորուչիկի և մայրի աստիճանները ոչնչացնելու մասին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մարտի: Ներքին 5% կրկնորդ փոխառութեան տոմսակների խաղարկութեան ժամանակ տարան հետեւեալ տոմսակները:

№№	Սերի	Տոմսակի	Տարված	Գումար
7,201	—	17	—	200,000
1,501	—	34	—	75,000
19,973	—	4	—	40,000
2,504	—	49	—	25,000
4,173	—	2	—	10,000
9,057	—	47	—	
7,995	—	16	—	
266	—	4	—	
1,190	—	26	—	8,000
15,887	—	33	—	
8,495	—	7	—	
15,817	—	11	—	
8,226	—	41	—	5,000
18,856	—	5	—	
1,817	—	11	—	
19,187	—	5	—	
14,541	—	9	—	1,000
19,232	—	20	—	
12,148	—	11	—	
18,868	—	49	—	
9,261	—	8	—	1,000
5,807	—	23	—	
4,179	—	32	—	
5,419	—	11	—	
103	—	46	—	1,000
17,319	—	17	—	
5,178	—	36	—	
18,708	—	11	—	
1,775	—	25	—	1,000
8,058	—	1	—	
9,405	—	30	—	
19,622	—	10	—	
8,878	—	10	—	1,000
2,924	—	32	—	
14,947	—	40	—	
13,103	—	9	—	
16,690	—	44	—	1,000
5,004	—	29	—	
1,255	—	37	—	
8,487	—	24	—	

Խմբագիր—Տրատարակող ԳԻՒԳՈՒ ԱՐՇՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ԶԱՏԻԿ
Հիւսիսային 1 ր., Գուրգայաներ 2 ր. 75 կ., բրինձ 4 ր., բրնձաներ 8 ր.
ամբողջ հազուստ 13—19 ր., զրապ, մահուկ,
արիֆ, արբիներ և այլոսներ կես
գնով: Հարկական բրինձ 6 կ., սագո և պեր-
լովայա կրուպա 9 կ., պանիր չեստեր 70
կ., նշտայ կոլմանի 18 կ. Գուրգայ, լուծո-
ղական ձեթի պիլուներ 2 կ., լուսացի փո-
շի 5 կ.: ՆՈՐՈՒԹԻՒՆ: Մեղրամեմ և
արծաթէ մամեր 35 և 42 կ. Գուրգայ: Մեծ
քանակութեամբ անդրկական և ֆրանսիական
մահաճականեր 30% էժան քան թէ ուրիշ
տեղ: այսինքն երկխաների համար 4 ր.,
մեծերի համար 12 րուբլուց: ԻՍԿԱԿԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:
23—36

ԶՄԻՒՆՆԱԹՅՈՒՆ

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՍՈՒՆ»
«Ամսագրի» ր. 1 և 2 ր.
«Մարտի» ր. 1 և 2 ր.
«Ապրիլի» ր. 1 և 2 ր.
«Մայիսի» ր. 1 և 2 ր.
«Յունիսի» ր. 1 և 2 ր.
«Յուլի» ր. 1 և 2 ր.
«Օգոստոսի» ր. 1 և 2 ր.
«Սեպտեմբրի» ր. 1 և 2 ր.
«Օկտոբրի» ր. 1 և 2 ր.
«Նոյեմբրի» ր. 1 և 2 ր.
«Դեկտեմբրի» ր. 1 և 2 ր.
1—10

ՓՈՒՍԿԱՐԶ ԿՐԵՂԻՏԻ ԹԻՖ-
ԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ:
Ընկերու-
թեան վարչութիւնը պատիւ ունի
յայտնել ընկերութեան պ. պ.
անդամներին, որ տա-
րեկան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
նշանակում է ներկայ տարվայ
ՄԱՐՏԻ
14-ին: Ժողովի տեղի և ժամի
մասին առան-
ձին կը յայտնվի:
2—2

ԵՒԳԵՆԻ ԲԵՐՆԵԿՍ
Վորոն-
ջովսկայա փողոց № 46,
սեփական տուն,
Թիֆլիսում: Հիւանային և
ներկարարու-
կան ԳՈՐԾԱՐԱՆ և ՊԱՀԵՍՏ
արջո-
ների, մարմարեցի և
չուգունից շինված
առարկաների:
2—5 (1)

Որպէս զի առաջն
առնենք այն կեղ-
ծումները, որ սնում են
մետալները արբելու
մեր պոմադի հետ
UNIVERSAL-METAL-
PUTZ-POMAD
անունով, որ իր լաւ
յատկութիւններով
ամբողջ աշխարհին
յայտնի է, մենք
անհրաժեշտ համարեցինք
Ռուսաս-
տանի հարաւի, Ղրիմի և
Կովկասի համար
իւրաքանչիւր արկղի վրա
բացի մեր անու-
նից տպել և այնտեղի
մեր միակ զործակա-
տարների անունները:
ԵՂ. ՊԵՏՐՈՎԻՇՅՈՒՆ
ՅՈՒՄ, որոնց յանձնել են
կեղծումները
հարաւի օրէնքների
ամենայն խտուրթեամբ:
Բերլինի զործարանատերեր
Ազարբերա
Յօգտ և ընկ. Adalbert Vogt et. C-o
2—3

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵՐԵԼԻ
(ախտներ և բազիլոստներ)
ծախում են մեծ
քանակութեամբ և մանր,
միջի փողոցում կատարիկաց
փողոցի անկիւնում
ՄԻ-
ՔԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ
պահեստում:
Օտարաբարգաբացիք
կարող են դիմել այս
հասցեով. Թիֆլիս,
Միխայլ
Ս. Թեր-Նիկոցօսու.
149—150

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ

Նոր ստացվեցաւ Ամերիկայից
ՍԱՏԱՅԿՆ
որն ուրիշ տեղ ծախվում է
համար մէկ րուբ-
լովի իսկ մեզ մօտ 40
կոպէկ է: Արծրունու
զաւլերէում:
4—10

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
«ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.»
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ԽՄԻՉՔՆԵՐԻ
առևտուրը դադարեց-
նելու պատճառով առաջին
տեսակի ԿՕ-
ՆԵԱԿԸ փաճառվում է 1 ր.
10 կ. շե-
շու, ՊՈՐՏ-ՎԷՅՆ և ԽԵՐԵՍՍ
1 ր.
շեշու: ԼՕՆԳՕՆԻ
խանութում ԱՌԵՆ-
ՏՐԱԿԱՆ բանկի տակ:
6—10

Ե. Օ. ՓԱՐՈՒԽԵԱՆՑ

Պատիւ ունեմ յայտնել
Թիֆլիսի և օտար
քաղաքացի պ. պ.
փաճառականներին որ
բաց եմ արել նոր
ՍԱԳՆՏՍՏԱՎՈ և
ԿՕՄԻ-
ՍԻՐՆԻ ՏՈՒՆ
Լօղլոյում: Կատարում եմ
ամեն տեսակ պատուէրներ,
այսինքն մա-
նուֆակտուրի, զարմարէյնի
և մահուկի
ապրանքների ուղարկել:
Յոյս ունեմ որ պ.
պ. փաճառականները
իմ առաջարկութիւնը
անուշադիր չեն թողնի
և լիովին բաւական
կը մնան իրանց
պատուէրներով, որ
խոտա-
նում եմ կատարել
անմիջապէս և ճշգու-
թեամբ: Իմ հասցէս.
ԼՕԳԶ, Յեղեղինանայա
փո-
ղոց, տուն Մայշայի,
№ 272, Ե. Օ. Փարուխօւ:
ԼՕԶՅ,
Церельная улица, д.
Майшаца № 272 Е. О. ПАРУХОВУ.
2—3

ՎԵՐԱԿՈՒՆԵՐ 4 ր.,
ճըճօղներ 1 ր.,
ճալիզ արձուներ 1 ր.
50 կ., ՓԱՅՏ-ԱՌՈՒ
4 ր., ԲԱՅԱՌՈՒ-ՄԱՀԱԿԱՎ
10 րուբլ և
աւելի, թէ յի բաժակներ
25 և 30 կ., մի
աման քորոցներ 50 կ.,
պատակա ծխողների
համար 60 կ. Գուրգայ,
անդրկական ՎԱՆՆԱ-
ՆԵՐ և այլն ծախվում են
ԱՆԳԼԻԱԿԱՆ
ԽԱՆՈՒԹՈՒ ՄԷՉ:
10,000 զոյգ գուրգայներ
25 կ.—1 ր. 7,000
մատուցարաններ 5 կ.—5 ր.,
10,000 զոյգ կանանց
ԳՈՒԼԱՆԵՐ 30 կ.—
1 ր., 7,000 մատուցարաններ
5 կ.—5 ր.,
1,000 ՄԱՀԱԿԱՎՆԵՐ 5 ր.—35 ր.,
400
արշին բոմազէյ. 1 ր.—1 ր.
30 կ., պա-
րուսինա 40 կ.—1 ր.,
300 հատ րէվօլվեր
4 ր.—35 ր., 700
ալրոմ կիսապոմ, 10,000
~Ֆունտ թէյ, ԹԵՑԱՄԱՆՈՎ
1 ր. 65 կ. Եր
~կաթէ զրիններ
իւրաքանչիւր ձեռքի
համար: Ծախվում են
ԱՆԳԼԻԱԿԱՆ
ԽԱՆՈՒԹՈՒ ՄԷՉ:
94—100

Միջի փողոց, կաթօլի չեսսկայա փողոցի անկիւն
№ 13.
Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ
ծախվում են ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵՐԵԼԻ
ամե-
նայն տեսակ, ֆրանսիական և
անգլիական երկաթէ կրակի
ՊԱՅՏՆԵՐ 8—30 ր., չա-
մազաններ 250—25 ր.,
սակօյաճներ 1. 30—12 ր.,
սոււն դուրն եր ճա-
նապարհի 6—35 ր.,
մարմններ (погребцы)
6—25 ր., սամօ վարն եր
60 կ.—1.25 ֆունտ,
կուրսներ պղնձ ամաններ,
Գերմանիայի երկաթէ
ամառով
ամաններ. ոււմի վարն
ի կն եր մրամօրնի
38 ր.—75 ր., հրացաններ
երկու լույսի 6—32 ր.,
աւելի ուղիքներ ամենայն
տեսակ 3. 50—30 ր.,
պատրոններ. (գուրգայներ)
րէվօլվերի, սիգար
Ռէնգարդի ֆարրիկց.
պատրո-
նու և թամբարու
կուրսարովի զիլզի
պատրոզի. 5,000
ՅՈՒՆԵՑ ԹԷՑ (չոյ) եւ.
ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկիտ.
(սուխար չոյու և
զաֆէ) Էինէմի. կօֆէ
Էինէմի և
Միխէյսօնի. Պետերբուրգու
40—1 ր. 25 կ.
հայկիներ ամենայն տեսակ
28 կ.—240 ր.,
պրորկայ զինէփաճաներին
համարային և
զարեջրի (дан
вельтерскихъ водъ и
пиво) զոյլթուկ (пучкъ),
պաղտոներ սամովարի
և
չոյու դանակ չանգոլ
զանազան ֆարրիկաների
1 ր. 20 կ.—25 ր.
գուրգայ.
գրչակրթներ 1 ր.
80 կ.—5—60 կ.
զանակ ջրի 1—60 կ.—12 ր.,
զա-
նակ հացի 20 կ.—1 ր.,
հատը, կուրսներ
1—40 մինչև 3—20 կ.
պրիբօ-
մի կարելու մաշկայ.
Անգլիական ութոներ,
Բրիտանիկ չոյիկիներ,
կաֆէի-
նիկներ ամենայն տեսակ,
Չաղաքներ կաֆէի
համար, ֆիլտրեր—Չուր
մարբերու,
կրպանալ կարթիկն
18 կ., փաք
Ֆրանսիայի ծախ,
թուղթ փոշոյի, կանկրու-
ներ, սուրբուշ,
մատիտ, զրիշ երկաթէ,
գրչակրթ, քարեալաճակ,
թանաք, թանաքամաններ,
պրեսպապիներ,
զոյլներ սեղանի և
չոյու ֆրաճէ,
փարչակի
և բրիտանիկ
գուրգայ 1—50 կ.
մինչև 12 ր.,
և
չոյու 45 կ.—5 ր.,
չու-
մանէէք 45 կ.—5 ր.,
չամազաններ
ամեն տեսակ 25 կ.—12 ր.
Չուխտ,
պոլ-
սապոլաններ Վարչալու,
ՌԵՅԻՆԻ
ԿԱՍՏՆԵՐ,
ամեն տեսակ,
զուրաններ կա-
նանց և
մարդկերանց 15 կ.—50 կ.
Չուխտ,
չապիկներ
մարդկերանց
զայուս-
տիկներ,
զոնտիկներ 35 կ.—4—50 կ.,
հատ,
անձրիկ և
չոյի.
սանդրեր շիր-
մայու ոսկորէ,
գուրսպրոզիլի
և փայտ
չափաներ
զիլի շորի
սապիկի,
պոլի և
կարտի
համար.
չուլքի թէլ (бумага)
մատիկի
կօճի և
չալէ (гарусь)
ֆէլ-
չալիէք
մարդկերանց
և կանանց
պրոտմաներ,
քիտաներ,
պատրոնի
ամաններ
և մանր
զոյլանտերիկի
ապրանքներ,
սապն
ամեն տեսակ
3 կ.—30 կ.,
կտոր,
հոտալիտ
ջրեր
պուրի
Գլիցերին
ջրի
քացախ,
հոտալիտ
պարաշոկներ
ԿԻՆԵՐԻ
ԼԱՐՏՈՐԱՏՈՐԻՑ.
և այլն և
այլն և
այլն:
Վաճառականներին
առանձին
պայմաններով
և զիջումով
վերջիչեալ
պա-
րանքներ
մեծ
քանակութեամբ
մշտապէս
զանվում են
ՄԻՔԱՅԵԼ
ՏԵՐ ՆԻԿՈՂՈ-
ՍԵԱՆՅԻ
պահեստում.
(ВЪ СКЛАДѢ)
միջի
փողոցում
կաթօլիկաց
փողոցի
ան-
կիւնում
№ 13:
Օտարաբարգաբացիք
կարող են
դիմել
հետեալ
հասցեով.
Тифлисъ
Ми-
хайлу
Н. Теръ-Никогосову.
3—180
Միջի փողոց, կաթօլի չեսսկայա փողոցի անկիւն
№ 13.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆ
ՈՐԲԱԹ, 5 ՄԱՐՏԻ
Պալատական արտիստ
Նո-
րին Մեծութեան
Նասր-
էդ-Գին
պարսից
Շահի
ՐՕՔԷՐՏ
ԼԷՆՑ
աշակերտ և
ազգական
նը-
շանաւոր
պարսիկ
կատար-
ղի, Մահօմեդ
Իզմայիլ
Բէյի
պատիւ
կուսնայ
տալ
ուրբաթ
օր,
մարտի
5-ին,
Արծրունու
թատ-
րօնում
մի
մեծ
կախարա-
կան
ներկայացում,
ՆՈՐ
ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ:
Մանրամասները
աֆի-
շաներում:
6.



ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ
ՀԻՄՆԱԿՈՒԹԻՒՆ
ՆՈՒԹՈՒՄ
ETABLISSEMENT SERICICOLE DE NOUKA
ՇԵՐԱՄԻ
ՍԵՐՄԵՐ
Գեղին բոժոժների
ՖԱՆՏԱՅԻՆ և
ԽՏԱԿԱՅԻՆ,
արդիւնաբերված
ՊԱՍՏԵՐԻ
սխառմայով:
Ծախվում է
արդիւնաբերող
ԼԷՐԻՍԷ
մի
զոյլանիկ
50 կոպէկ,
մի
ֆունտը
48
րուբլ:
Թիֆլիսում
ծախվում է
Պ. ԱՐԷՔՏԻ
մազալիտում,
Գոլովինսկի
պրոսպեկտի
փրա,
տուն
Կոստանտին
Զուբալովի:
ՆՈՒԹՈՒՄ
պ.
ԼԷՐԻՍԷ
հիմարկութեան
մէջ:
10—10

ԱՌԵՆՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
ԵՂԱՐՑ ԾՈՎԵԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.
ՄԻՔԵԼ ԳՈՂՈՑՈՒՄ
ԱՆԱՆՈՎԻ
ՏԱՆԸ
գնում և
փաճառում է
ամեն տեսակ
ՏՈԿՈՍԱՐԵՐ
թղթեր,
ոսկի
և
արծաթ
զրամ:
Փոխ և
տալիս
զրամ,
տոկոսաբեր
թղթերի
ԳՐԱԽԱԿԱՆՆԵՐՈՎ,
ՓՈՒՍ-
ԴՐՈՒԹՈՒՆՆԵՐ
է
անում
Մօսկվա,
Օրէսսա
և
Արուսասհան:
ԱՊԱՀՈՎ
ԱՑՆՈՒՄ
է
ներքին
5%
փոխառութեան
տոմսակեր 50
կոպէկով:
ԸՆԴՈՒՆՈՒՄ
է
զրամ
ըստ
պահանջման
. . . . . 5%
" "
ընթացիկ
հաշուով
. . . . . 5%
" "
6
ամիս
ժամանակաւ
. . . . . 6%
" "
12
" "
. . . . . 7%
Օտար
քաղաքացւոց
յանձնարարութիւնները
կատարում են
անմիջապէս
և
ճշգու-
թեամբ:
1—10 (1)